



## Բնադահողանության և ընդերֆի սեսչական մարմնի ղեկավար Ե. Տերտերյանի եռօրյա այցը Սյունիքի մարզ

Այցի շրջանակներում Տեսչական մարմնի ղեկավարը հանդիպում է ունեցել ՀՀ Սյունիքի մարզպետ Վ.Հակոբյանի, մարզի գլխավոր դատախազի, ոստիկանության մարզային վարչության պետի, ինչպես նաև մի շարք խոշոր հանքարդյունահանող ընկերությունների ղեկավար կազմի («Ագարակի» ՊՍԿ, «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ, «ԶՊՄԿ» ՓԲԸ) հետ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են հանքարդյունահանման հետևանքով առաջացած բնապահպանական հիմնահարցեր, անտառածածկ տարածքների պահպանման, որսագողության դեմ պայքարի և մարզում առկա այլ բնապահպանական խնդիրներ: Իր խոսքում Ե.Տերտերյանը կարևորել է տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցությունը՝ ակնկալելով վերջինների աջակցությունը բնապահպանական խնդիրների վերահանման ու լուծման գործում: Սյունիքի մարզպետ Վ.Հակոբյանն իր հերթին վստահեցրել է, որ մարզի ղեկավար կազմը նույնպես խիստ կարևորում է մարզում առկա բնապահպանական խնդիրները և պատ-

րաստականություն հայտնել Տեսչական մարմնին ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն: Հանդիպման ավարտին կողմերը շնորհակալություն են հայտնել միմյանց՝ ընդգծելով սերտ համագործակցության կարևորությունն ու շարունակականությունը: Zangezur TV-ին տված հարցազրույցում Ե.Տերտերյանը կարևորել է նոր սերնդի էկոլոգատիրական հարցը՝ համարելով, որ բնապահպանությունը պետք է հանդիսանա երիտասարդ սերնդի արժեհամակարգի հենասյուներից մեկը: Այցի շրջանակներում Տեսչական մարմնի ղեկավար կազմը, ՀՀ Սյունիքի մարզպետը, մարզի գլխավոր դատախազը, ոստիկանության մարզային վարչության պետը և այլ տեղական պաշտոնատար անձինք մասնակցեցել են Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու բակում իրականացվող անվանական ծառատունկին, որի ընթացքում տնկվել է 15 լիբանանյան մայրի: Սյունիքի մարզպետ Վ.Հակոբյանը և Տեսչական մարմնի ղեկավար Ե. Տերտերյանը ծաղիկներ են խոնարհել Մեծ եղեռնի, Սումգայիթի, Բաքվի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողին, արցախյան ազատամարտում զոհվածների եղբայրական գերեզմանին՝ հարգանքի տուրք մատուցելով զոհերի հիշատակին: Նա այցելել է նաև Տեսչական մարմնի Սյունիքի տարածքային բաժին, ծանոթացել աշխատակիցների աշխատանքային պայմաններին, տարածքային բաժնին փոխանցել տեխնիկական միջոցներ և գույք (Դրոն, ֆոտոխցիկ, հեռադիտակ, ձեռքի լուսարձակ, վրան և այլն)՝ շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ իրականացվող աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու և պատշաճ վերահսկողություն իրականացնելու համար:

## Հայաստանը Ալմաթիում վստահորեն գեկուցեց Բաթումիում ստանձնած դարսավորությունների կատարման ընթացքի մասին



Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) հրավերով ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը Ղազախստանի Հանրապետության Ալմաթի քաղաքում մասնակցել է «Կանաչ գործողությունների ծրագրի» աշխատանքային խմբի տարեկան խորհրդակցությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ենթակառուցվածքներում ներդրումների իրականացման և ցածր ածխածին պարունակող տնտեսության անցման, հիմնական բնագավառներում /նաև գյուղատնտեսության/ ջրային ռեսուրսների կառավարման կատարելագործման և աշխատանքի արտադրության բարձրացման, ինչպես նաև նախատեսվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման հարցեր: «Կանաչ աճի» համատեքստում քննարկվել են նաև կրթության, հաղորդակցության և հանրային իրազեկման բարձրացման հարցեր: Խորհրդակցության ընթացքում Խ. Հակոբյանը ներկայացրել է Հայաստանում վերոհիշյալ հարցերի վերաբերյալ կատարված աշխատանքների առաջընթացի, ինչպես նաև ՄԱԿ-ի ԵՏՀ-ի կողմից կազմակերպվող «Կանաչ տնտեսություն» միջոցառման վերաբերյալ Բաթումիի նախաձեռնության (BIG-E) շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը: Անդրադարձ է եղել նաև կանաչ աճին ուղղված միջգերատեսչական քաղաքականության համակարգման ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման և բյուջեի հաշվետվության վերաբերյալ խնդիրներին: Հանդիպման ավարտին պայմանավորվածություն է ձեռք բերվել 2018 թ. կողմերի հանդիպումն անցկացնել Սլովենիայի Հանրապետությունում:

## Թափուկ փայտանյութն, ըստ սահմանված կարգի՝ տրամադրվում է անվճար, վերջ...

ԶԼՄ-ներով և սոցիալական ցանցերով պարբերաբար տեղեկատվություն է տարածվում այն մասին, որ անտառամերձ համայնքների բնակիչներին ծառերի թափուկները տրամադրվում են որոշակի վճարի դիմաց: ՀՀ բնապահպանության նախարարությունը մեկ անգամ ևս հայտնում է, որ ՀՀ անտառային տարածքների, մասնավորապես՝ բնության հատուկ պահպանվող տարածքները կառավարող ՊՈԱԿ-ների տնտեսական և ռեկրեացիոն գոտիների անմիջական հարևանությամբ գտնվող բնակավայրերի բնակիչներին ոչ արտադրական փայտանյութը՝ թափուկը, տրամադրվում է անվճար՝ համաձայն «Ոչ արտադրական նպատակներով թափուկ վառելափայտի մթերման և բացթողման» կարգի, որը հաստատվել է ՀՀ բնապահպանության և գյուղատնտեսության նախարարների 2011թ. նոյեմբերի 29-ի N 253-Ա և N 226-Ա հրամաններով: Հատուկ պահպանվող տարածքներում պարբերաբար առաջացող քամատապալ և ձյունակուտոր փայտանյութը /չինափայտը/



հաշվառվում և ներկայացվում է որպես այդ տարածքները կառավարող ՊՈԱԿ-ների սեփական եկամտի միջոց, իսկ թափուկ փայտանյութ է համարվում անտառային հողի վրա ընկած մահացած-ծառերի բները կամ դրանց մասերը, ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառտնտեսությունների հատատեղիներում մնացած, իրացման ոչ ենթակա փայտանյութի մնացորդները: Վերոհիշյալ բնակավայրերի բնակիչները թափուկի տրամադրման կարգին կարող են տեղեկանալ մոտակա ՊՈԱԿ-ների և անտառտնտեսությունների գրասենյակներից և աշխատակիցներից:

## Վնասի չափը կազմել է՝ 3.144.141 ՀՀ դրամ

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ստորաբաժանումների աշխատակիցների կողմից 30.10.17-ից 03.11.17 թթ. ընկած ժամանակահատվածում կատարված ստուգումների, շրջայցերի, Տեսչական մարմնին հանձնված վարչական վարույթի քննության, ինչպես նաև եռամսյակային հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերվել և արձանագրվել է թվով 31 իրավախախտում, որից 18-ի վերաբերյալ անցկացվել է վարչական վարույթի քննություն և նշանակվել 850.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Ընդհանուր առմամբ վերոնշյալ ժամանակահատվածում բնապահպանական իրավախախտման հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի չափը կազմել է՝ 3.144.141 ՀՀ դրամ: Մասնավորապես՝



### Բուսական աշխարհի պահպանության ոլորտ

Արձանագրվել է իրավախախտման 15 դեպք:

Վերոնշյալ ժամանակահատվածում քննված վարչական վարույթներով նշանակվել է 300.000 ՀՀ դրամ տուգանք, հաշվարկվել 2.940.141 ՀՀ դրամ շրջակա միջավայրին պատճառված վնաս, որից՝ Լոռի հայտնաբերված ապօրինի ծառահատման 4 դեպքի (հատվել է 3 բոխի, 1 կաղնի, 2 հաճարենի, 1 լորենի և 3 բարդի) վերաբերյալ քննված վարչական իրավախախտման վարույթներով հաշվարկվել է 1.194.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս: Տավուշ հայտնաբերված վառելիքայտի ապօրինի տեղափոխման 3 դեպքի (7,617 խմ փայտանյութ) վերաբերյալ քննված վարչական իրավախախտման վարույթներով հաշվարկվել է 227.412 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս և քննության արդյունքում նշանակվել է 150.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: 2 դեպքի վերաբերյալ հաղորդում է ներկայացվել իրավապահ մարմիններին:

Վայոց Ձոր հայտնաբերված ապօրինի ծառահատման 1 դեպքի (հատվել է 1 գիհի) վերաբերյալ քննված վարչական իրավախախտման վարույթով հաշվարկվել է 12.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս և քննության արդյունքում նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Սյունիք հայտնաբերված վառելիքայտի ապօրինի տեղափոխման 1 դեպքի (4,5 խմ փայտանյութ) վերաբերյալ քննված վարչական իրավախախտման վարույթով հաշվարկվել է 145.800 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս և ապօրինի ծառահատման 1 դեպքի վերաբերյալ քննված վարչական իրավախախտման վարույթով հաշվարկվել է 1.209.729 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս: Արարատ հայտնաբերված վառելիքայտի ապօրինի տեղափոխման 4 դեպքի (6 խմ փայտանյութ) վերաբերյալ վարչական իրավախախտման վարույթները գտնվում են քննության ընթացքում:

Արմավիր հայտնաբերված վառելիքայտի ապօրինի տեղափոխման 1 դեպքի (4,2 խմ փայտանյութ) վերաբերյալ քննված վարչական իրավախախտման վարույթով

հաշվարկվել է 151.200 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս և քննության արդյունքում նշանակվել է 100.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:



### Մթնոլորտային օդի պահպանության, թափոնների տեղաբաշխման, հողերի օգտագործման և պահպանման ոլորտ

Արձանագրվել է իրավախախտման 3 դեպք:

Վերոհիշյալ ժամանակահատվածում քննված վարչական վարույթներով կայացվել է վարչական տուգանքի 3 որոշում՝ 230.000 ՀՀ դրամի չափով՝

Կոտայք հայտնաբերված հողի օգտագործման և պահպանման պահանջների խախտման 1 դեպքի վերաբերյալ նշանակվել է 80.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Հայտնաբերված առանց անթափանց ծածկոցի սորուն նյութերի տեղափոխման 1 դեպքի վերաբերյալ նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Երևան դիմում-բողոքի հիման վրա մթնոլորտն աղտոտող նյութերի արտանետման և թափոնների տեղաբաշխման դեպքի վերաբերյալ քննված վարչական իրավախախտման վարույթով նշանակվել է 100.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:



### Կենդանական աշխարհի պահպանության ոլորտ

Արձանագրվել է իրավախախտման 1 դեպք:

Շիրակ հայտնաբերվել է ձկան ապօրինի որսի 1 դեպք (առգրավվել է 60գ ղնովի ցանց, որսված 5կգ՝ 17հատ կարաս և կողակ տեսակի ձկները հանձնվել է «Ֆ.Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություն» ՊՈԱԿ), որի վերաբերյալ քննված վարչական իրավախախտման վարույթով հաշվարկվել է 5.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս և քննության արդյունքում նշանակվել է 70.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:



### Ընդերքի պահպանության ոլորտ

Արձանագրվել է իրավախախտման 8 դեպք:

Վերոհիշյալ ժամանակահատվածում քննված վարչական վարույթներով կայացվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 50.000 ՀՀ դրամի չափով՝

Վայոց Ձոր ստուգում է իրականացվել 1 տնտեսվարող սուբյեկտի մոտ, տրվել է հանձնարարական-ծանուցում (զգուշացում հանքային իրավունքի դադարեցման մասին)՝ սահմանված ժամկետում բացահայտված խախտումները վերացնելու նպատակով:

• Վնասի չափը կազմել է՝ 3.144.141 ՀՀ դրամ

Սկիզբը՝ էջ 31

Լոռի՝ հայտնաբերվել է ապօրինի ընդերքօգտագործման 1 դեպք՝ հողամասից սեփական կարիքների համար կատարվել է մինչև 2մ խորությամբ ոչ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանում (կավախառն կոպիճի լեռնային գանգված), որի վերաբերյալ նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Գեղարքունիք՝ հայտնաբերվել է ընդերքի ապօրինի շահագործման 6 դեպք, որոնց վերաբերյալ իրավախախտման վարույթները գտնվում են քննության ընթացքում:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները սահմանված ժամկետում չեն ներկայացնելու համար.

Կայացվել է վարչական տուգանքի 4 որոշում՝ 200.000 ՀՀ դրամի չափով, որից Արմավիր՝ 3 տնտեսվարողների նկատմամբ նշանակ-

վել է 50.000-ական ՀՀ դրամ վարչական տուգանք, ընդամենը՝ 150.000 ՀՀ դրամ:

Շիրակ՝ 1 տնտեսվարողի նկատմամբ նշանակվել է 50.000 ՀՀ դրամ վարչական տուգանք:

Արագածոտն՝ 3 տնտեսվարողի վերաբերյալ վարչական իրավախախտման վարույթները գտնվում են քննության ընթացքում:

Ընթացքի մեջ գտնվող 4 իրավախախտումների վարչական վարույթի քննության արդյունքում նշանակվել է 400.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, իսկ 1 դեպքի վերաբերյալ քննված վարչական իրավախախտման վարույթով հաշվարկել է 199.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս:

Ընդհանուր առմամբ նշված ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 636.440 ՀՀ դրամ գումար:


### Ձկնագողությունն անմա՞հ է...

Նախարարության «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահպանության բաժնի աշխատակիցների կողմից նոյեմբերի 5-ից 10-ն ընկած ժամանակահատվածում կազմվել է բնապահպանական խախտումների մասին 4 արձանագրություն՝ 2 ապօրինի ձկնորսության և 2 ապօրինի խեցգետնորսության վերաբերյալ: Առգրավվել է 16 հատ պոլիէթիլային ձկնորսական ցանց, 129 հատ «սիգ» տեսակի ձուկ և 10,5 կգ խեցգետին: 87 հատ ձուկ հանձնվել է Սևանի թիվ 3 «Չեքիաթ» ՀՈԱԿ-ին, 42-ը՝ «Ծովագյուղի» մանկապարտեզ ՀՈԱԿ-ին: Առգրավված խեցգետինը բաց է թողնվել Սևանա լիճ:



### Փականային ռեժիմի տղավորիչ արդյունքները

Արարատյան դաշտում, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման և ջրի խնայողության նպատակով շարունակվում են խորքային հորերի փականային ռեժիմի բերման աշխատանքները: ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության աշխատակիցների կողմից մեկ շաբաթվա ընթացքում ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովա, Մարմարաշեն, Ռանչպար, Սիս, Սիփանիկ, համայնքների վարչական տարածքներում գործող՝ համապատասխանաբար «Գոլդեն Ֆիշ-4» ՍՊԸ-ի (299,0 լ/վրկ), «Մխչյան Ֆիշ» ՍՊԸ-ի (229,0 լ/վրկ), «Հունան Ֆիշ» ՍՊԸ-ի (16,0 լ/վրկ), Աշոտ Հովհաննիսյանի



(60,0 լ/վրկ), Խաչատուր Սահակյանի (67,0 լ/վրկ) պատկանող խորքային հորերի փականային ռեժիմի բերման արդյունքում խնայվել է մոտ 671,0 լ/վրկ ջուր: Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների խնայողությանն ուղղված միջոցառումները շարունակվում են:

## Լարախաղացություն 6300-ից ավելի «Շիրմաբարերի» վրա

Ուս մեծ գրող Իվան Տուրգենևը «Չիմարը» վերնագրով մի լավ պատմվածք ունի: Մի պարզ և դուրահավատ մարդ գալիս է իմաստունի մոտ, թե՛ «օգնեք ինձ, բոլորն ինձ ծաղրում ու հալածում են եմ՝ իմ միատուրության և դյուրահավատության պատճառով: «Ուրեմն՝ կգնաս ու սրանից հետո ամեն ինչ կտրուկ կմերժես կամ կասկածի տակ կառնես, լսո՞ւմ ես, տառացիորեն ամեն ինչ, նույնիսկ ամենասովորական ու ակնհայտ բաները, ասում է իմաստունը»: Այս մարդը գնում և մի որոշ ժամանակ անց կրկին վերադառնում է, այս անգամ իր հետևից բերելով 30 մարդու: Նա իր երախտագիտությունն է հայտնում իմաստունին, ասելով, որ ամեն ինչ կասկածի տակ առնելով ու մերժելով ինքը հիմա հասարակության մեջ մեծ հարգանք վայելող անձնավորություն է դարձել:

-Իսկ ովքե՞ր են քեզ հետ եկածները,- հարցնում է իմաստունը:

-Դրանք իմ աշակերտներն են:

Եթե մեզանում մեկը փորձի հակադրվել հայտնի՝ «Բոլոր պաշտոնյաները գող ու սրիկա են» որակմանը, նա կդառնա «persona non grata» և կնկնի Տուրգենևի հերոսի օրը, քանի որ պատրաստի պատասխաններով ապրելը, պարզվում է, ավելի հեշտ է: Այսպիսին է, ասես, նաև մեր հասարակությունը: Նա նման է այն ծուլիկ ու անբան աշակերտին, որը խնդիրը լուծելու փոխարեն բացում է մաթեմաթիկայի դասագրքի վերջին էջը և այնտեղից արտագրում պատրաստի պատասխանը: Սա պարզ մարդկանց պարագայում գուցե ինչ որ կերպ տանելի է, բայց արի ու տես, երբեմն ճիշտ այդպես են վարվում նաև լրագրողներից շատերը: Չենք ուզում կոնկրետ անուններ տալ, որովհետև դա առանձնապես էական էլ չի, մեծ հաշվով, գործ ունենք բավական տարածված երևույթի հետ: Օրինակ, կայքերից մեկի լրագրողը գրում է. «Տավուշի մարզի բնակիչների և բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանի հետ օրեր

առաջ կայացած հանդիպումն ընթացել է տիպիկ մթնոլորտում»: Մենք, որպես այդ հանդիպման ներկայացուցիչներ, ուզում ենք մտաբերել որևէ տիպիկ դրվագ, բայց այդպես էլ չի ստացվում: Հոդվածի նման սկիզբը հիշեցնում է հոլիվուդյան թրեյլերի էքսպոզիցիա, որը, կարծես ասում է. «ամեն ինչ կանենք, որ ձանձրույթը ձեզ չսպանի»: «Այդ հրկիզումը տեղի ունեցավ այն բանից հետո, երբ հիշյալ տեղամաս էր այցելել նախարար Արծվիկ Մինասյանը և հանդիպել Շամախյան համայնքի բնակիչների հետ», - շարունակում է հեղինակը:

շարունակությունը՝ էջ 6 /



## • Լարախաղացություն 6300-ից ավելի «չիրնաբարերի» վրա

Սկիզբը էջ 5 /

Տեսնում եք չէ, ինչպես է «թերյերը» մտնում ժանրի կանոնների մեջ: Իրականում՝ այդպիսի հանդիպում չի եղել, նախարարն այդտեղ այցելել է հրդեհի մասին տեղեկանալուց հետո, և ոչ մի շամախյանցի չի եղել հրդեհի վայրում: Նույն լրագրողը, այնուհետև, մարտի է նետում ապատեղեկատվական, հաջորդ, իր կարծիքով գուցե ամենաուժեղ զինատեսակը, այն է՝ «Արծվիկ Մինասյանը հակադարձել է, որ անտառ հատելը հանցագործություն է, որ եթե չեն կարողանում ապրել, թող ինչ ուզում են անեն, բայց անտառ չհատեն», և մյուսը՝ «Նա չի ընկրկել նույնիսկ շարքային բնակիչների փաստարկների դեմ, որ իրենց արգելում են, սակայն ավելի «թափով» մարդկանց, ովքեր փայտամշակման գործարաններ ունեն, թույլատրում են»: Իրականությունը հետևյալն է՝ այդպիսի հարցեր հանդիպման ժամանակ առհասարակ չեն շոշափվել: Սրանից հետո հեղինակը գնում է իբր «խորհմաստ» ընդհանրացումների, այն է՝ «չի կարելի հարցերը կարգավորել ընդամենը «ոչ» ասելով, պետք է լուծում տրվի այս համայնքների բնակիչների զբաղվածությամբ»: Ըստ էության՝ ճիշտ միտք է, բայց մի՞թե դա է այս պահին ամենահրատապ հարցը: Արի ու հողվածագրին բացատրիր, որ այդ «ոչն» ասում է ազգային պարկի մասին օրենքը, և նախապայմաններ չի ընդունում, և որ ինքն անձամբ, նույնքան պատասխանատու է մեր երկրի անտառների պահպանության և օրենքների կիրառության խնդրում: Կամ՝ մեկ այլ լրագրողուհի էլ նստել ու որոշել է՝ «քանի որ նախարարությունը չի կարողանում խոսրովի անտառին տիրություն անել, դրա համար հանրությանը զբաղեցնելու համար այնտեղ նկարիչներ է տանում»: Պարզվում է՝ Բնապահպանության նախարարությանը շուտ կազմակերպելու գործառնություն էլ ունի, չգիտեինք... Նման բորբոքված երևակայությամբ և ապատեղեկատվությամբ լրագրողները ոչ իրենց և ոչ էլ մեր երկրին լավ ծառայություն չեն մատուցում: Եթե նրանք իրենց աչքերով տեսնեն, թե նախարարության աշխատակազմի ղեկավարը, տեղեկատվության վարչությունը մեկ օրվա մեջ՝ թե՛ գծով և այլ խողովակներով քանի՞ հարցի են պատասխանում կամ ընթացք տալիս, եթե տեղեկանան, թե ինչպես մեկ տարուց ավելի որևէ հարցապնդում, որ գերատեսչությունից կամ հասարակական կառուցից էլ լինի, անպատասխան չի մնում, այնժամ, գուցե փոխեն իրենց վերաբերմունքը: Պատահական չէ նաև, որ այս տարի հենց նախարարի մամուլ խոսնակը ստացավ «ոսկե բանալի» մրցանակը՝ օպերատիվ ու թափանցիկ աշխատանքի համար: Ի դեպ, առաջինը հենց նախարարը իր պաշտոնավարման սկզբից ևեթ խնդիր դրեց համակարգը ամբողջովին բացել լրատվական դաշտի առջև, այնուհետև՝ էլ ավելի կատարելագործել լրատվամիջոցների ու հանրության հետ աշխատելու մեխանիզմը: Մի՞շտ ենք հաջողում, իհարկե՛ ոչ, մի՞շտ ենք բավարար չափով օպերատիվ և գոհացնում լրատվամիջոցներին ու հանրությանը, իհարկե՛ ոչ: Աշխատանքը բարելավելու դեռ այնքան տեղ կա, քանի որ պրոբլեմների օբեկտիվ և սուբյեկտիվ շերտերը այնքան են իրար մեջ մխրճված, որ վրիպելն ու սխալվելը մեկից մեկ է: Ավելին՝ մեր պետական համակարգում իրավա-

ությունների և պատասխանատվության սահմանները երբեմն այնքան խճողված են, որ թերըմբռնումները ուղղակի դառնում են անխուսափելի: Եվ ցավալի է, որ լրատվական դաշտը դեռևս չի փորձում իրեն պահել խստապահանջ գործընկերոջ պես, որպեսզի այդ բացերը ևս վերանան: Այս պահին լրագրողների «շշպրելու ու մերկացնելու» կիրքը ընդամենը տիպիկ կամիքներ են, և «քարկտիկ» խաղն է հիշեցնում: Ցավալին այն է, որ երբ նրանք իրենց ինտրիգասիրությունը բավարարելու համար միայն պրոբլեմների «պոչից, թևից, փեշերից» են քաշքշում, կառավարման համակարգերում առկա խորքային հակասությունները կարող են նաև մնալ չբացահայտված: Համաձայնեք, մոտեցումները և աշխատանքը վերանայելու խնդիր կա... Հասել է մի հանգրվանի, որ հանրությունը, ինչպես ասում են թմրամուլների մասին՝ նստել է «ասեղների վրա»: Եվ այս գործում լրագրողական «ծառայությունը» անուրանալի է: Ինտրիգ պատվիրողը, ասես, հանրությունն է, ստեղծողը՝ լրատվամիջոցները: Հասարակական հետաքրքրությունները՝ առավելապես կողմնորոշված են դեպի բացասական ինֆորմացիան, հետևաբար լրատվամիջոցներից պահանջվում է ավելացնել «թմրադեղի չափաբաժինը»: Սա արդեն ինքնին լույս է սփռում այն իրողության վրա, թե ինչո՞ւ են լրագրողները գնում բացահայտ ապատեղեկատվության, քանի որ ավա՞ղ դեռ չկա այն գիտակցությունը, որ միայն դեմ լինելը, դեռ չի նշանակում ընդդիմադիր լինել, և, որ ընդդիմադիր են դառնում նախ՝ սեփական տարծքն ու ճշմարտությունը պաշտպանելու համար: Եկել է կողմնորոշվելու պահը՝ եթե նպատակը բնապահպանական առկա համակարգը և նրա ղեկավարին վարկաբեկելն է, ապա նրանք «ճիշտ» ճանապարհի վրա են և գործում են դրված նպատակին հարիր միջոցներով, իսկ եթե նրանց մտահոգությունը ազնիվ է, ապա կփորձեն այսուհետև, մի քիչ ավելի հեռուն տեսնել և կիսականան, որ այս պահին նախարարության ջանքերը ուղղված են մի պարզ, բայց դժվար իրականացվելիք բանի՝ բռնել անտառը ոչնչացնողի, Սևանի ձկան պաշարները հարամողի, ընդերքն անխոհեմ կողոպտողի, մթնոլորտն աղտոտողի և կարմիր գրքի կենդանուն սպանողի ձեռքը: Եվ նորմալ չէ ամեն ինչ բողարկել «մարդիկ տուն են պահում»՝ պրոֆեսիոնալ լրագրությանը ոչ հարիր ծխածակույթի տակ: Վիրաբույժները առաջինը ուռուցքը հեռացնում են, և ապա՝ մտածում օրգանիզմի դիմադրողականությունը բարձրացնելու և ուռուցքածին մյուս գործոնները վերացնելու մասին: Մեր դեպքում՝ դա նախ անտառագողին Դիլիջանի և մյուս անտառներից դուրս շարտելն է և օրինազանցությունները կանխարգելել, որովհետև այսօր Դիլիջանում ապօրինաբար հատված 6300-ից ավելի ծառերի բներն, ասես, դարձել են «չիրնաբարեր», իսկ չկտրվածները՝ կույզ են եկել՝ թփերի տակ դարանակալած կացիների ահից: Ուզում ենք հավատալ, որ այս «կացիները» հանձինս լրագրողների չունեն համախոհներ:

**ՄԱՆՎԵԼ ՄԿՐՏՉԱՆ**

«Բնություն» էլեկտրոնային թերթի խմբագիր

## Էկոլոգիական դասընթացներ՝ հանրակրթական դպրոցներում



Սատաղ սերնդի էկոլոգիական գիտելիքների զարգացման, էկոլոգիական գիտակցության և վարքագծի ձևավորման, ինչպես նաև տեսական գիտելիքները գործնականի հետ զուգորդելու նպատակով և ՀՀ բնապահպանության նախարարի հանձնարարականով ՀՀ բնապահպանության նախարարության Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության Տեղեկատվության և էկոլոգիայի բաժինը նախաձեռնել է «Պատանի բնասեր» ակումբի ստեղծումը: Գործընթացի շրջանակներում ս.թ-ի նոյեմբերի 6-ին և 9-ին ակումբի անդամ «Հայ կրթություն» կրթական հիմնադրամի և «Ուսում» հանրակրթական դպրոցների 7-9-րդ դասարանների մոտ 150 աշակերտների համար անցկացվել է բաց դաս բնապահպանական ուղղվածություն ունեցող թեմաներով: Բացման խոսքով հանդես է եկել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և էկոլոգիայի բաժնի պետ Անահիտ Մուրադյանը, ով կարևորել է նման միջոցառումների անրաժեշտությունը կրթական տարբեր մակարդակներում մատաղ սերնդի հետագա դաստիարակության և զարգացման գործում: Դասը վարել են Օզոնի ազգային կենտրոնի և

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի համապատասխան մասնագետները, որի ընթացքում ներկայացվել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են օզոնային շերտի հիմնախնդիրը և ուլտրամանուշակագույն ճառագայթներից պաշտպանվելու եղանակները, ջրային ռեսուրսները և դրանց արդյունավետ պահպանությունը, կլիմայական փոփոխությունները և դրանց վրա ազդող գործոնները, կենսաբազմազանության պահպանության խնդիրները՝ մասնավորապես կենդանական և բուսական աշխարհի, ինչպես նաև կարմիր գրքում գրանցված հազվագյուտ բույսերի և կենդանիների վերաբերյալ տեղեկատվություն: Ունկընդիրներին տեղեկացվել է, որ միջոցառման շրջանակներում իրենց լավագույնս դրսևորած աշակերտները հնարավորություն կունենան հանդիպելու ՀՀ բնապահպանության նախարարի հետ, ով բարձր է գնահատում մատաղ սերունդների կրթման գործում նմանատիպ միջոցառումների կարևորությունը և մշտապես ուշադրության կենտրոնում է պահում էկոլոգիական կրթության և դաստիարակության հարցերը: Բնապահպանական ուղղվածության այսպիսի միջոցառումները կրելու են շարունակական բնույթ:



# Բաց այրման վսանգավորության ու կանխարգելման մասին աշխատաժողով Արագածոտնի մարզում



Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Օրիուս կենտրոնում տեղի է ունեցել ուսուցողական աշխատաժողով, որը կազմակերպվել էր ՀՀ բնապահպանության նախարարության և ՄԱԿ-ի արդյունաբերության կազմակերպության հետ համատեղ իրականացվող «Առկա լավագույն տեխնոլոգիաների և բնապահպանական իմաստով լավագույն գործունեության մեթոդաբանության կիրառումը՝ բաց այրման աղբյուրներից կայուն օրգանական աղտոտիչների ոչ կանխամտածված արտանետումների նվազեցման համար» ծրագրի շրջանակներում: Ուսուցողական աշխատաժողովին մասնակցել են ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, համայնքապետեր, ՀՀ ԲՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի ներկայացուցիչներ, ինչպես նաև շահագրգիռ գերատեսչությունների մասնագետներ: Աշխատաժողովը նպատակաուղղված էր «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների իրականացմանը: Ստոկհոլմ-

մի կոնվենցիայի հիմնական դրույթներից մեկը դիօքսինների և ֆուրանների արտանետումների կրճատումն է, որոնց հիմնական աղբյուրներից մեկը հանդիսանում է աղբավայրերի բաց այրումը: Աշխատաժողովի ընթացքում ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի պետ Անահիտ Ալեքսանդրյանը և ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Շրջակա միջավայրի հիգիենայի բաժնի պետ Ռուբեն Գրիգորյանը հանդես են եկել զեկույցներով, որոնց ընթացքում ներկայացրել են թափոնների ոլորտը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև աղբահանությանը և աղբավայրերի կառավարմանը ներկայացվող սանիտարական պահանջները: Նշված զեկույցներից հետո ծավալվել է քննարկում, որի ժամանակ արծարծվել են աղբավայրերում թափոնների բաց այրման վտանգավորությանը, դրա կանխարգելմանը, առողջությանը հասցվող վնասներին վերաբերող հարցեր:





## Միշտ և Մաշտ արջերը սեղափոխվել են Երևանի կենդանաբանական այգի

Բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում, «Գաջեգործ» ՓԲԸ տնօրինության հետ եռակողմ համաձայնությամբ՝ վերջինիս տարածքում պահվող Միշտ և Մաշտ արջերը ՀՀ ԱԻՆ աշխատակիցների աջակցությամբ տեղափոխվել են Երևանի կենդանաբանական այգի:

Տեսչական մարմնի Երևանի տարածքային ստորաբաժանման աշխատակիցների կատարած շրջայցի արդյունքում պարզվել է, որ արջերի պահման պայմանները համապատասխանում են ՀՀ կառավարության «Անագատ և



կիսաազատ պայմաններում վայրի կենդանիների, այդ թվում՝ ՀՀ կարմիր գրքում գրանցված կենդանիներին պահելու և օգտագործելու կարգը սահմանելու մասին» թիվ 725-Ն որոշմամբ հաստատված պահանջներին, մինչդեռ «Գաջեգործ» ՓԲԸ տնօրինությունը պատրաստակամություն էր հայտնել, որպեսզի արջերը տեղափոխվեն առավել բարենպաստ պայմաններով տարածք:

## Օգտակար հանդիպում Dasaran կրթական կենտրոնում

Ընապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանն այսօր այցելել է Dasaran կրթական կենտրոն: Փոխնախարարը, վերջինիս ուղեկցող Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Արմեն Վարդանյանը և Կենսառեսուրսների կառավարման գործակալության էկոտուրիզմի գծով մասնագետ Վահագն Սարգսյանը ծանոթացել են ծրագրի կողմից իրականացվող աշխատանքների առանձնահատկություններին:

«Նոր սերնդի դպրոց» հասարակական կազմակերպության նախագահ, Dasaran կրթական ծրագրի հիմնադիր Սուրեն Ալոյանը և գործադիր տնօրեն Արթուր Բաբայանը ներկայացրել են կրթական ծրագրի կայացման ուղին, ձեռքբերումները, Dasaran.am կայքի հնարավորությունները, ընթացիկ ու նախանշված նախագծերը: Խ. Հակոբյանը ներկայացրել է էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ուղղությամբ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից իրականացվող քայլերը, էկոտուրիզմի ոլորտում առկա վիճակը: Քննարկում է ծավալվել վերոհիշյալ հարցերի վերաբերյալ համագործակցության հնարավոր ձևաչափերի և մեխանիզմների շուրջ, նախանշվել այն հարցերի շրջանակը, որոնց ուղղությամբ առաջիկայում կառուցվելու է գերատեսչության և կրթական ծրագրի փոխգործակցությունը:



նության նախարարության կողմից իրականացվող քայլերը, էկոտուրիզմի ոլորտում առկա վիճակը: Քննարկում է ծավալվել վերոհիշյալ հարցերի վերաբերյալ համագործակցության հնարավոր ձևաչափերի և մեխանիզմների շուրջ, նախանշվել այն հարցերի շրջանակը, որոնց ուղղությամբ առաջիկայում կառուցվելու է գերատեսչության և կրթական ծրագրի փոխգործակցությունը:

## Հայտարարություն




«Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարություն» փաստաթուղթի վերաբերյալ հանրային լսումներ.

Ս.թ-ի նոյեմբերի 17-ին ժամը 15:00-ին  
ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում

հասցե՝ ք. Երևան,  
Պետրոս Ադամյան փ. 14շ.,  
հեռ.՝ (010) 560-212

տեղի կունենա «Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարություն» փաստաթուղթի վերաբերյալ հանրային լսումները:

### Բնության թանգարան, էկոլոգիայի օրը



Նոյեմբերի 10-ին ՀՀ բնապահպանության նախարարության Հայաստանի բնության պետական թանգարանում կայացել է տոնական միջոցառում նվիրված թանգարանի հիմնադրման 65-ամյակին: Բացման խոսքով հանդես է եկել ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը:

Ողջունելով հյուրերին՝ Խ. Հակոբյանը շնորհավորել է Հայաստանի բնության պետական թանգարանի հիմնադրման 65-ամյակը, բարձր գնահատել այս տարիների ընթացքում կատարված աշխատանքները: Փոխնախարարը հիշատակել է թանգարանի առաջիկա ծրագրերը, մասնավորապես՝ «Ջանգեզուր» կենսոլորտային համալիրի տարածքում Հայաստանի բնության պետական թանգարանին կից մասնաճյուղի բացման աշխատանքների մասին, կարևորել այն գործառույթը, որն իրականացնում է թանգարանը մատաղ սերնդի էկոլոգիայի և դաստիարակության գործընթացում: Միջոցառմանը ներկայացվել է թանգարանի հիմնադրման մասին հակիրճ



### Հայաստանի բնության ռեսական թանգարանը փառանք է

տեղեկատվություն, ինչպես նաև ՀՀ ժողովրդական նկարիչ, ՀՀ նկարիչների միության անդամ, պրոֆեսոր Հրանտ Թադևոսյանի (Թաթոս) անցած ուղին: Հանդիսավոր արարողության ընթացքում ներկայացվել է նկարչի՝ «Հայոց աշխարհի յուրատիպ մեկնաբանում» խորագրով աշխատանքները: Տոնական միջոցառման ժամանակ հանդես են եկել Շենգավիթի պատանեկան ստեղծագործական կենտրոնի սաները: Նշելով, որ նմանատիպ միջոցառումները շարունակական բնույթ են կրում՝ Գ. Ղազարյանը նաև տեղեկացրել է, որ թանգարանի հիմնադրման 65-ամյակին նվիրված միջոցառումները շարունակվելու են ևս 10 օր:

### Երևանի «Արաբկիր զբոսայգու» ֆունկցիոնալ կայանի ուղեգիր ստացան բնապահպանների ճանաչողական ծառերը

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցները նոյեմբերի 11-ին մասնակցել են



Երևանի քաղաքապետարանի կազմակերպած համաքաղաքային ծառատունկի և շաբաթօրյակի աշխատանքներին: Ծառատունկ և խնամքի միջոցառումներ են իրականացվել Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված «Արաբկիր զբոսայգու» տարածքում: Բնապահպանության նախարարության աշխատակիցները տեղում կատարել են նաև մաքրման աշխատանքներ:

Նախագիծը՝ Արծրուն Պետանյանի  
խմբագիր՝ Մանվել Սևրջյան  
Ջևաբկուր՝ Նարինե Բաղդասարյանի  
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝  
011 818 517